**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«20» 08 2015 թ.

Հ Ղ-1383

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 2015 թվականի օգոստոսի 12-ի թիվ 02/12.10/13836-15 գրության՝ հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ Ձեզ ենք ուղարկում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության եզրակացությունը:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք 010-26834
21 08 2015

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումը՝

առաջարկում ենք Համաձայնագրից հանել 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ համապատասխանացնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 46 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության և օտարերկրյա պետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի օրինակելի ձևին»:

ՀՀ Նախագահի աշխատակազմի
փորձագիտական-վերլուծական վարչություն